

**2015 ԹՎԱԿԱՆԻՆ ՄԱՐԶԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ  
ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՍՊՈՐՏԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ  
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

Հաշվետու ժամանակահատվածում կատարվել են հետևյալ աշխատանքները.

- Նախարարությունը նպատակային գործունեություն է ծավալել մարզական հերթափոխի պատրաստման գործում, մանկապատանեկան մարզադպրոցներում և օլիմպիական հերթափոխի մարզական քոլեջներում ֆիզկուլտուրային-առողջարարական, մարզական, ուսումնա-դաստիարակչական աշխատանքների որակը բարձրացնելու, մարզական կառույցների վերանորոգման, սպորտային բժշկության և հակադոպինգային ծառայության հիմնախնդիրների կազմակերպչական աշխատանքների կատարման ուղղությամբ:

- Մշակվել և ՀՀ կառավարություն է ներկայացվել «ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորվող մանկապատանեկան մարզադպրոցներում աշխատող մարզիչ-մանկավարժների և ղեկավար անձնակազմի պաշտոնային դրույքաչափերի, հավելավճարների և լրավճարների հաշվարկման և վճարման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը: Նախագիծը կյանքի է կոչվել 2015 թվականի հուլիսի 15-ի N 798 - Ն որոշմամբ:

- Մշակվել և ՀՀ կառավարություն է ներկայացվել «Հայաստանի Հանրապետության մանկապատանեկան մարզադպրոցները, մարզաձևերի ազգային ֆեդերացիաները և այլ մարզական հասարակական կազմակերպություններ գույքով ապահովելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը: Նախագիծը կյանքի է կոչվել ՀՀ կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 10-ի N 1455 - Ա որոշմամբ:

- Մշակվել և ՀՀ արդարադատության նախարարություն է ուղարկվել «Հայաստանի Հանրապետության Նախագահի 2009 թվականի հունվարի 14-ի ՆԿ-1-Ն կարգադրության մեջ լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության Նախագահի կարգադրության նախագիծը:

- Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հունիսի 11-ի N 657-Ն որոշման և ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի 2015 թվականի փետրվարի 16-ի N 19-Ա/1 հրամանով հաստատված մանկապատանեկան մարզադպրոցներում աշխատող մարզիչ-մանկավարժների վերապատրաստման ուսումնական պլանի համաձայն իրականացվել են 2015 թվականի վերապատրաստման 6 ցիկլի կազմակերպման նախապատրաստական աշխատանքները: Վերապատրաստվել են 171 մարզիչ-մանկավարժներ, այդ թվում՝ 70-ը մարզերից:

- Պետական նպատակային ծրագրի շրջանակներում նախապատրաստական աշխատանքներ են իրականացվել 2 բժիշկ-մասնագետի և 2 սպորտային հոգեբան մասնագիտությամբ ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության միջնորդությամբ Մ. Հերացու անվան բժշկական համալսարանի օրդինատուրայում և Երևանի պետական համալսարանում սովորելու համար:

- ՀՀ Նախագահի 2009 թվականի հունվարի 14-ի «Հայաստանի Հանրապետության հավաքական թիմերի (ներառյալ հաշմանդամային սպորտը) կազմում օլիմպիական, պարաօլիմպիկ, սուրդօլիմպիկ խաղերում, աշխարհի և եվրոպայի առաջնություններում բարձր արդյունքների հասած մարզիկներին և նրանց մարզիչներին Հայաստանի Հանրապետության Նախագահի անվանական թոշակ հատկացնելու մասին» ՆԿ-1-Ն կարգադրության համաձայն 2014 թվականին մարզական բարձր արդյունքներ ցուցաբերած 161 մարզիկների և մարզիչների ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի 2015 թվականի հունվարի 26-ի N5-Ա/1 հրամանով 2015 թվականին հատկացվել է ՀՀ Նախագահի անվանական թոշակ: